

**ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ**

обозначенного здесь срока

07 FEB

338.1(47.925)

Մ-26  
աբ

ՏԵՍ. 20 9

Ա. ԽԱՆՁՅԱՆ

ԴԵՊԻ ԳՅՈՒՂԻ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

(Զեկուցում Հ. Կ. (Բ.) Կ. VI համագումարում)

1570

—□—

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

6 .05. 2013

30.299

ԹԵՇՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆԻ ՈՒԽ

Հրատ. № 961 Պ. № 399  
Տիրամ 2000  
Դրառնեպլար № 1839 (բ.)



## I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերներ, առաջին անգամը չե, վոր մեր կուսակցության համագումարն իր աշխատանքների հատուկ առարկա յե դարձնում գյուղական աշխատանքների խնդիրը, կուսակցության անելիքները գյուղում, գյուղական աշխատանքների հետ կապված կոնկրետ հարցերը բազմաթիվ անգամ քննության հյութ են հանդիսացել կուսակցության համագումարների և ղեկավար հրդանների համար: Յեվ այդ միանգամայն հասկանալի յե, վորովհետեւ մեր կուսակցության համար, վորն ապրում ե և գործում դերազանցրեն մանրգյուղացիական, գյուղատնտեսական մի յերկրում, գյուղական աշխատանքները չեն կարող միշտ ել չդրավիլ չափազանց կարևոր տեղ մեր աշխատանքների ընդհանուր ֆրոնտում:

Սակայն, այդ այդպես լինելով հանդերձ, չափանցություն չի լինի պնդել, վոր աշխատանքների հարցը դժվար թե ուրիշ վորևէ ժամանակ մեզ համար ունեցած լինի այնքան այժմնեական, կարեոր և բացառիկ նշանակություն, ինչքան նա ունի այսուր հեղափոխության և սոցիալիստական շինարարության դարգացման ներկա ետապի համար: Այսոր ավելի, քան յերբեք, սոցիալիստական շինարարության բոլոր հարցերն ամենասերտ կերպով կապված են գյուղի և

գուղատնտեսության հետ: Այսոր ավելի, քան յերբեք,  
կուսակցության անելիքները զյուղում կապված են  
չափազանց կարեռը գործնական յեղակացություննե-  
րի և ձեռնարկումների հետ: Գյուղի սոցիալիստական  
վերակառուցման հիմնական հարցերը, վորոնք դեռևս մո-  
տիկ անցյալում դրվում էին ընդհանուր ձեռվ և վորոշ  
չափով վերացական բնույթ ելին կրում, այսոր ստա-  
նում են կոնկրետ կերպարանք և դրվում են միանգա-  
մայն գործնական հողի վրա:

Միաժամանակ, ընկերները, բարդանում են մեր  
աշխատանքի պայմանները գյուղում:

Տնտեսական մի շաբթ սուր դժվարություններ  
առանձնապես զգացվում են զյուղատնտեսության գը-  
ծով: Սրվում ե զասակարգային պայքարը զյուղում:

Այս բոլոր պայմանները, պայմաններ, վոր  
ընդհանուր են վողջ Խորհրդացին Միության համար,  
բավական են, վորպեսզի մեր կուսակցությունն այ-  
սոր ավելի, քան յերբեք, բենոի իր ուշադրությունը  
զյուղի աշխատանքների վրա: Աւայն, ընկերներ,  
յերբ խոսում ենք Հայաստանի Կոմկուսակցության  
խնդիրների մասին զյուղում, պետք ե ինկարի ունե-  
նանք ևս մի հավելյալ հանգամանք: Անհնար ե ժխտել  
վոր յեթե չբավականանք միայն ձեւական տվյալնե-  
րով այլ ինդիրը քննենք ըստ ելության, պետք ե ա-  
սենք, վոր դեռ մոտիկ անցյալում Հայկուկուսի նախ-  
կին ղեկավարության աշխատանքների շրջանում, զյու-  
ղական աշխատանքների նկատմամբ, կուսակցության  
ղեկավարության ուշադրությունը յեղել ե անբալարար:  
Անուշաղիր վերաբերմունք գեղի զյուղի շետավոր-  
ման յեվ գարգացման ընթացքը, անհոգ վերաբեր-

մունք գեղի գասակարգային զծի խախտան դեպքե-  
րը, Վորոնեց հետզինք սիստեմափիկ բնույթ ելին ըս-  
տանում, գասակարգային թօնամու գերի յեվ գտանգի  
նսեմացման տրամադրությունները յեվ բույլ պայքարը  
Երանց վերաբերմամբ, — այս բօլորը նախկին դ. կավա-  
րության սիտալների հաճագումարի մեջ կառեվոր  
տեղերից մեկը բոնելով՝ չելին կարող չըսդնել գգալի  
նետ մեր զյուղական աշխատանքների դրության գրա:  
Այդ խէլ պատճառով անդիմելի յե, վոր այսոր զյուղա-  
կան աշխատանքները պիտի կազմեն մեր աշխատանք-  
ների ընդհանուր շղթայի մեջամենակարեսը մի ողակը:  
Այսոր, յերբ զյուղի սոցիալիստական վերակառուց-  
ման հարցերը զրվում են չափազանց կոնկրետ  
ձեռվ և գործնական հողի վրա, Հայաստանի  
Կումկուսակցությունն իր աշխատանքների և ուշու զրու-  
թյան կենտրոնը պիտի դարձնի մեր անելիքները գյու-  
ղում, առաջ բերի այդ աշխատանքների ասպարիգում  
ընդհանուր աշխուժացում և զգալի բեկում:

ԳՅՈՒՂԾՆԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿՐԵԴԻՄԱՆ ՀԵՆՐԵՑՈՒՄԸՆԵՐԸ ՅԵԼ  
ՎԵՐԱԿՐԵԴԻՄԸՆԵՐԸ ԽԵՆԴԻԲՆԵՐԸ

Ընկերներ, նախքան զյուղական աշխատանքների  
կոնկրետ հարցերին անցնելը, անհրաժեշտ ե յերկու  
խոսքով կանգ առնել միքանի հանրագումարների վը-  
րա, վորոնք անհրաժեշտ են վորպես յելակետներ՝ գը-  
ծելու համար մեր աշխատանքների և զյուղի հետագա  
զարգացման ուղիները: Խորհրդացին Հայոստանը,  
չնայած արդյունաբերության զարգացման ասպարի-  
գում մեր ունեցած աշքի ընկնող նվաճումներին, մնում  
ե առաջմ վորպես զերազանցորին զյուղատնտեսական

յերկիր: Գյուղական ազգաբնակությունը կազմում է Հայաստանի ընդհանուր ազգաբնակության 81 տոկոսը, ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մոտ 70 տոկոսը գեռևս անցյալ տարի մենք ստանում եյինք իհաշիվ զյուղատնտեսության: Ահա թե ինչու առաջին հարցը, վոր մենք պետք ե դնենք, վերաբերում ե մեր զյուղատնտեսության ներկա դրությանը: Պարզ ե և անվիճելի, վոր վերջին տարիները ինչպես վորդ Խորհրդային Միության մեջ, նույնպես և մեղանում զյուղատնտեսության ընհանուր վերելքի, աճման ու զարգացման տարիներն ելին: Մեր զյուղատնտեսությունը, վոր դաշնակների որոք հասել եր վերին աստիճանի քայլացման, վորի միքանի կարեոր ճյուղերը հասել ելին բացարձակ անկման, այժմ ընդհանուր առմամբ հասնում ե նախալուսակման վատերազմյան վիճակին: Ահա միքանի հիմնական ցուցանիշները, վորոնք տալիս են մեր զյուղատնտեսության վերականգնման պատկերը. ցանքսաղաշերի ընդհանուր տարածությունը, վոր դեռ 24 թվին հասնում եր նախալուսակման մակարդակին և կազմում ե նախալուսակման վրության 99,3 տոկոսը. անամնապահությունը Հայաստանում հասել ե ամբողջապես նախալուսակման մակարդակին և կազմում ե նախալուսակման վրության 99,3 տոկոսը, զյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 1927—28 թվին գերազանցեց նախալուսակման սահմանները և կազմում ե նրա 102 տոկոսը: Այս ընդհանուր ցուցանիշներն արդեն բավական են՝ ցուց տալու համար, վոր իսկապես մենք վերջացրել ենք զյուղատնտեսության վերականգնման երջանքները և թեակուում ենք աշխա-

տանքի մի նոր շրջան՝ զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման օրջանք:

Սակայն, ընկերներ, բնորոշելու համար զյուղատնտեսության ներկա դրությունը՝ չի կարելի բավականանալ միայն քանակական ցուցանիշներով: Միաւ կլիներ կարծել վոր գյուղատնտեսությունն ամբողջապես նախալուսակման սահմաններում վերականգնելուց հետո միայն մենք ձեռնարկում ենք նրա վերակառուցման աշխատանքներին: Վոչ. այդ յերկու շրջանների մեջ չինական պարիսպ չկա: Արգեն այժմ մենք ունենք վոչ միայն բանակական անուն, այլև վարակական փոփոխություններ, վորոնք զգալի կերպով փոխում են մեր զուրկի յեզ զյուղատնտեսության ընդհանուր տեսքը, փոփոխություններ, վորոնք ունեն հսկայական նօանակություն յեզ ամրացնում են կառուցվող սոցիալիզմի դիրքերը զյուղում: Ի՞նչ վորակական փոփոխությունների մասին ե խոսքը: Հիշենք ամենից առաջ կոռպերացիակի շինարարության լայն ծավալումը զյուղում. հիշենք կոլտնտեսությունների տարածումը, զյուղի մեքենայացումը, հողովագործման և հողամշակման ասպարեզում մեր հաջողությունները և այլն: Այս բոլորը, ընկերներ, արդյունք ունեցան մեր զյուղատնտեսության արտադրողականության և ազրանք սյնության վրոշ բարձրացումը: Գյուղատնտեսության ապրանքային ցուցանիշները, վորը մինչև պատերազմը կազմում եր զյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր գումարի 27,8 տոկոսը, 24 թվին ընկել եր մինչև 19,4 տոկոսի, այժմ բարձրացել ե 27,1 տոկոսի: Հողագործության բերքատվության բարձրացման ընթացքը բնորոշվում է հետևյալ տվյալներով.

տարեկան միջին բերքը մի հեկտարից 24—26 տարին կազմում էր 52,9 գրոթ, 25—27 տարիներին՝ 54,3 գրոթ և 26—28 տարիներին՝ 57,3 գրոթ։ Այսպիսով, վերջին հինգ տարվա ընթացքում բերքատվությունը Հայաստանում ընդհանուր առմամբ տեղել է 8,3 տոկոսով։ Մի հեկտարի արտադրողականության արժեքը, վոր 13 թ. կազմում էր 55 ռ., այժմ բարձրացել է 58 ռուբլու։ Ուրեմն կարելի է արձանագրել բերքատվության բարձրացման ասպարիզում վորոշ նըղաճումներ։ Սակայն, ընկերներ, այս նախնական տվյալները թյուրիմացության առիթ չպետք ե տան։ Նրանք չպետք ե առիթ ծառայեն թերապնահատելու մեր գյուղատնտեսության չափազանց հետամնացության անժամանի փաստը։ Վերցնենք հողամշակության տեխնիկայի խնդիրը։ Վիճակագրությունը ցույց է տալիս, վոր 1927 թվին Հայաստանում բոլոր գյուղական տնտեսությունների միայն 23,4 տոկոսը վարում է գութանով արակառի միջոցով հողը մշակում են բոլոր տնտեսությունների 5,1 տոկոսը, փայտե գութանով՝ 1,13 տոկոսը, իսկ արորը՝ գյուղատնտեսական հետամնաց միջնադարյան այդ գործիքը, Հայաստանում գերիշխող տեղ է գրավում—բոլոր տնտեսությունների 56,7 տոկոսը։ Հողը մշակում են արորով (չութով)։ Հատկապես լեռնային մեր գավառներում արորը հողամշակության տմբնատարածված գործիքն է մնում։ Ընկերներ, հենց այս փաստը, տարրական պրիմիտիվ այդ գործիքի նման տարածումը Հայաստանում, ինքնըստինքրիան ցույց է տալիս մեր գյուղատնտեսական տեխնիկայի անմիջիթար գրությունը։

ցը: Այստեղ ևս զբությունն անբավարար է: Մեր ըստ լոր գյուղական անտեսություններից սկսական ինքնառարով և լծկանով հողմ մշակում ե միայն 22 տոկոսը, վարձու ինվենտարով և լծկանով՝ 32 տոկոսը: Ավելացրեք այս լերկու ցուցանիշներին և զգալի հողասակավությունը Հայաստանում, հողացրվածությունը, հողածակությունը հայաստանում, մեր գյուղի կուլտուրական մակարդակի չափազանց ցածր դրությունը, և լրիվ կլինի մեր գյուղատնտեսության հետամնացության անմիջիթար պատկերը: Բնակերներ, գյուղատնտեսության հետամնացությունը միայն Խորհրդավիճն Հայաստանին հատուկ լերսությունը, գյուղատնտեսության հետամնացությունը, նրա զարգացման դանդաղ տեմպը, ինչպես հայտնի լին, բնարոշ և վողջ Խորհրդավիճն Միության համար, իդուր չե, ընկերներ, Համամիութենական մեր կուսակցության կենտրոնն իր վերջին պիենումներով ամենասուր կերպով գրել կուսակցության առաջ, վորպես վճռական մի խնդիր՝ գյուղատնտեսության բարձրացումը, նրա զարգացման թափի ուժեղացումը: Մենք գիտենք, վոր մեր կուսակցության հիմնական լոգունուգի կենսագործումը՝ լերկրի ինդաւարիացման մասին, ամենասերտ կերպով կապված ե և պայմանավորվում ե գյուղատնտեսության դրությամբ, վարտիչներ վերջինս կազմում ե աճող արդյունաբերության պարենային և հումուկային բազա: Այս տեսակիտով գյուղատնտեսության հետամնացությունը, նրա բերքատվության ցածր դրությունը կրում ե իր մեջ մեր սոցիալիստական քաղաքի և գյուղի կապի խորման վըտանգը, ապա ուրեմն նա վատանգի յե լենթարկում

յիալիստական շինարարության հիմնական պայմանը, բանվորա-գյուղացիական դաշինքը: Ահա թե ինչու մեր կուսակցության համար ներկա ժամանակաշրջանի ա-մենակարևոր խնդիրներից մեկն է զյուղատնտեսու-թյան զարգացումը, նրա զարգացման թափի զգալի ուժեղացումը, նոր հողերի ոգտագործումը, ցանքսա-դաշտերի ընդարձակումը, բերքատվության բարձրա-ցումը, զյուղատնտեսության ապրանքայնության և արտադրողականության բարձրացումը: Ահա խնդիր-ներ, վորոնք ամենասուր կերպով դրվել են վողջ կուսակցության առաջ: Նույն խնդիրներն իրենց ամ-բողջ հրամայականությամբ և աժմեական ությամբ մենք պետք ե դնենք և մեր կուսակցության կազմակեր-պությունների առաջ Հայաստանում: Համ. Կոմկու-սակցության կենտրոնական կոմիտեն վորպես մար-տական մի խնդիր առաջադրել ե բոլոր կազմակեր-պություններին՝ այս տարվա ընթացքում բարձրաց-նել բերքատվությունը վոչ պակաս քան 3 տոկոսով և ցանքսադաշտերի տարածությունը՝ վոչ պակաս քան 7 տոկոսով: Այս առաջադրության իրադործումը մեզ համար անհրաժեշտ մինհմումը պիտի համարել: Սա կլինի առաջին քալը, վորի վրա, սակայն, չի կարելի կանգ առնել. Ահա, ընկերներ, առաջին հիմնական խնդիրը, վոր մենք յելակետ պիտի ընդունենք այսոր, յերբ քննում ենք կուսակցության անելիքները զյու-դում: Յեվ այս տեսակետից մեր բոլոր կազմակեր-պությունները, բոլոր զյուղական կոմբիներն իրենց աշխատանքների առանցքը պետք է զարձնեն զյուղա-տնտեսության ընդհանուր բարձրացման, երա զարգաց-ման տեմպի արագացման խնդիրը:

## ՄԵՐ ՔԸՆԸՔԸԿԱՆ ԴԻԲՔԵՐԸ ԳՑՈՒՂՈՒՄ

Այժմ անցնենք, ընկերներ, մեր գյուղի քաղաքա-կան գրության և զյուղացիության գաղաքական տրամադրություններին:

Այս ցնագավառում ամենաբնորոշ յերեսութը դասակարգ էին պատքարի սրումն ե, և քանի գնում, այնքան պարզորդ ե զանում այն ֆոնը, վորի վրա ծավալվում ե գասակարգակին պատքարը գյուղում: Մենք ունենք բազմաթիվ տվյալներ և փաստերի մի յերկար շարան, վորոնք ցույց են տալիս դասակար-գային թշնամու աշխուժացումը, նրա հակակուսա-կցական յելույթների և հակախորհրդակին աղիտացիայի ավելի լայն ծավալը, անցյալ շրջանների հետ համե-մատած: Այս յերեսութիւն աչքի յե ընկնում հատկապես այժմ, յերբ մենք գտնվում ենք խորհուրդների վերընտ-րական կամպանիայի նախորյակին:

Հարց ե ծագում, ինչն ե կազմում դասակարգա-ցին պայքարի գլխավոր բովանդակությունը գյուղում: Այդ հարցին անհրաժեշտ ե տալ պարզորդ պատաս-խան այն պատճառով, վոր աջ տրամադրություննե-րով վարակված մի շարք ընկերներ փորձում են մաս-սայականացնել թշնամական յելույթների արժատ-ները, նրանք կարծում են, վոր մեր ներկա քաղա-քականությունից զժգոհ են զյուղացիության լայն մասսաները, նրանք ասում են, վոր գյուղացին առանց հեռանկարի, անհույս և մնացել: Ընկերներ, ձի՞շ ե արդյոք նման գնահատականը, կարելի՞ յե համաձայն-վել նման հոռեատեսական յեզրակացությունների հետ: Կոնկրետ փաստերը հաստատում են, վոր այդպիսի

յեղբակացությունները փաստական հիմք չունեն: Բուլը նրանք, վորոնք մոտիկ առնչություն ունեն զյուղի հետ և անձիշականություն: Չփում հն զյուղացիական լայն մասսաների հետ, հաստատում են, վոր սրվող դասակարգավիճ պալքարի հիմնական բովանդակությունը՝ կրւակների պատասխանն և սոցիալիստական ուժերի առաջնադաշտանը գյուղում, մի պատասխան, վորին հեռու յին արձագանքերոց զյուղացիական լայն մասսանները, չքավոր և միջակ զյուղացիությունը: Այդ յեղբակացության հանգելու համար մենք ունենք պերճախոս տվյալներ: Յեթե ճիշտ է, վոր զյուղացիական լայն մասսանները դժգոհ և անրավական են, այդ դեպքում նրանք պետք է կրծատելին ցանքերի տարածությունը: Փաստերը հակառակն են հաստատում: Այս աշնանը ցանքադաշտերը Հայաստանում լայնացան 10 տոկոսի սահմաններում: Ինգուստրիացման փոխառությունը տարածվեց զյուղում լայն չափերով: Գոյություն ունի աչքի ընկնող հռուսնք զեպի կոլտնտեսությունները, ինչպես նաև մասսայական դիմումներ կուսակցության մեջ ընդունվելու համար: Այս բոլորը վկայում են, վոր խօսե: Իօնանուրիան յեվ կոմմունիստական կուսակցության գիրքները գյուղում այսոր ավելի ամուր են, քան յերեք, վոր չեավոր զյուղացիությունը յեվ միջակների ամենալոյն հասպածները համակրում են մեր լոգութեանին: Սակայն սխալ կլիներ հանգստանալ այս ընդհանուր և դրական յեղբակացության վրա: Վոչվոք չի կարող ժխտել, վոր գաղաղած դասակարգային թշնամուն՝ կուլակի ագիտացիան բոլորովին անհետեանք չի անցնում զյուղում: Կուլակների պայքա-

րի բաղմաղոն ձևելը (սուտ լուրերի և բամբասանքն ների տարածումը, կաշառք, ցեկողեցի, չքավորներին հյուրասիրելը, սպասնալիքներ, ահաբեկումներ, հրդեհումներ և այլն) վորոշ զյուղերում թողնում են վորոշ հետք: Կուլակներին շատ անգամ հաջողակում են զեղակի մեջ զցել իրենց ազգեցության շրջանակի մեջ առնել գյուղացիության չքավորական և միջակ վորոշ տարրեր: Պետք է շեշտել, վոր լինում են և գեպքեր, յերբ կուլակին այս ասպարելիում որ յեկատիվորեն ոգնության են գալիս մեր ընկերները, խորհրդակին ստորին ապարատը, յերբ նրանք թուրալարում են կուսակցության քաղաքականության աղավաղումը, միջակի հանդեպ մեր զծի խախտումը զյուղում: Նման բազմաթիվ յերեսութներ վերջին ամիսների ընթացքում յեղել են հարկադրման ասպարարում, յերբ զրեթե բոլոր զավաներում տեղական բիզում, յերբ զրեթե բազմաթիվ միջակ տնտեսություններ, կամ զըպրոցների ընդունելության հարցում, յերբ շատ անգամ միջակների յերեխաները զուրս ելին մնում կամ զըուվում ելին դպրոցներից: Յեթե ավելացնենք այս բոլորին նաև գործնական աշխատանքների թերությունները, այն ժամանակ հասկանալի կլինեն փոքրիկ տառանումները զյուղացիության զանազան հատվածների տրամադրությունների մեջ: յեղել են բազմաթիվ գեպքեր, յերբ այս կամ այն գյուղում կուլակին հաջողվել է քեր, յերբ այս կամ այն գյուղում կուլակին հաջողվել է սպատակութել մեր սիալները, մեր սայթագումները և ամրացնել իր զիրքն ու ազգեցությունը զյուղացիության վորոշ շերտերի վրա: Ահա թե ինչու, ընկերներ, մեր համագումարը, զյուղի ներկա քաղաքական զըու-

թյան գրական հանրագումարը կատարելով հանդերձ,  
վճռականորեն պիտի շեշտի մեր լենինան լողունդի լի-  
ակատար կենսագործման անհրաժեշտությունը գյու-  
ղում՝ ամրացնել գյուղական չքավորության դիրքերը,  
ամրացնել նրա սերտ դաշինքը միջակ գյուղացիու-  
թյան հետ՝ ուղղելով այդ գաղինքը կուլակի դեմ։ Այդ  
լենինյան լողունդը մնում է գորպես մեր գյուղում  
տարվող քաղաքականության, մեր գյուղական բոլոր  
աշխատանքների հիմնաքարը։

Ամուր կազմակերպել չքավորությունը և հենվել  
նրա վրա, սերտ կապ և գաղինք պահպանել միջակ  
գյուղացիության հետ, սահմանափակել և մեկուսացնել  
կուլակին, ծավալել հարձակումը նրա դեմ, — ահա հիմ-  
նական գիծը, վոր պետք ե հիմքը կազմի մեր բոլոր  
աշխատանքների գյուղում։ Խնդիրը կայանում է նը-  
րանում, վորպեսզի մենք կարողանանք կոնկրետ հար-  
ցերի վրա ցուց տալ և ապացուցել վոր միջակի և  
չքավորության շահերը զուղագիպում են և վոչ թե  
հակասում իրար։ Վոչ մի դեպքում չպետք ե թույլ  
տալ, վոր այն գենքը, վորով մենք պայքարում ենք  
կուլակի դեմ, դիպչի նաև միջակ գյուղացուն։ Ել ա-  
վելի. հարկավոր ե, վորպեսզի միջակի հետ ամրացող  
մեր դաշինքն ոգտագործվի կուլակի դեմ։ Հավատա-  
րիս լենինյան հիմնական լողունդներին՝ ապահովել  
դասակարգութին պարզորոշ գիծ և նրա անսալթաք կի-  
րառումը գործնականում, — ահա գյուղի սոցիալիստա-  
կան վերակառուցման գլխավոր քաղաքական նախա-  
պայմանը։

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԵՎԱՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՍՈՅԻՑԼԱԿԸՆ ԴԵՄՔԸ  
Մեղ մնում և պարզել մի ընդհանուր հարց և.  
դա մեր գյուղի սոցիալական զեմքի հարցն ե, այն հար-  
ցը, թե ինչպիս և ընթանում մեր գյուղի շերտավո-  
րումը ներկայում։ Այդ անհրաժեշտ և պարզել, վար-  
պեսզի կարողանանք գծել գյուղի հետագա զարգաց-  
ման ուղիները և թշնամի պարբերի աստիճանական  
սահմանափակման ծրագիրը, այդ ծրագիրն իրագործե-  
լու կոնկրետ միջոցները։ Զնայած այս հարցի հսկա-  
լու նշանակության, մենք չենք կարող առայժմ  
վոչ միայն սպասիչ կերպով, այլ նույնիսկ բավարար  
վոչ միայն սպասիչ կերպով, այլ կոնկրետ անցյա-  
շափով պատասխան տալ նրան։ Չենք խսում անցյա-  
լի մասին։ բացակայում են նաև մեր գյուղի ներկա  
գրությունը բնորոշող մշակված նյութեր։ Զափազան-  
ցություն չի լինի առել, վոր մեր կոմիսարիատները,  
մեր կենտրոնական որգանները չեն ճանաչում գյուղն  
իր ամբողջ բազմազանությամբ, չունեն ներկա գյու-  
ղի սոցիալական-անտեսական պատկերը։ Սա մեր աշ-  
ղի սոցիալական-անտեսական պատկերը։ Սա մեր աշ-  
ղի ընկնող թերություններից մեկն ե։ Չենք կարող  
առել, վոր այս ուղղությամբ վոչ մի աշխատանք չի  
կատարվի։ Մեր կենտրոնական մյուս կոմիսարիատ-  
ները հավաքում են բազմաթիվ արժեքավոր նյութեր։  
Հոգֆողկոմատը, որինակ, հսկայական գումարներ և  
ծախսել այդ աշխատանքների վրա։ Բայց արդյունք-  
ները միանգամայն անբավարար են այն պատճառով,  
վոր այդ աշխատանքներն ընթացել են առանց վորեւ  
համաձայնության ընդհանուր վիճակագրական աշխա-  
տանքների հետ, առանց մարքսիստական ձևուն հաս դե-  
տավարության։ Այդ պատճառով անհրաժեշտ և, վոր  
համագումարը շեշտի մեր վիճակագրական աշխատանք-

Ների կանոնավորման անհրաժեշտությունը և հաճանաւորարի կինտիումին գիտական հիմքերի վրա դնել գյուղի սոց.-տնտեսակ. գրության ուսումնասիրության գործը:

Հիմնվելով մոտավոր նշանակություն ունեցող մի շարք տվյալների վրա, կարելի է տեղրակացնել, վոր մինչև հեղափոխությունը Հայաստանի գյուղացիական սոցիալական շերտավորումը բնորոշվում էր չքավոր տնտեսությունների աչքի ընկնող, հոծ բազմությամբ:

Պատերազմը և նրան հետևող ժող. անտեսության ընդհանուր անկումը, Դաշնակցության տիրապետությունը և նրա հողային քաղաքականությունը չելին կարող հետեւանք չունենալ մեր գյուղական տնտեսությունների հսկայական միծամանության դրության ել ավելի վատթարացումը: Միայն Հայաստանի խորհրդանացումից հետո բացվեցին գյուղատնտեսության զարգացման նոր ուղիներ, վորոնք զգալի փոփոխություններ առաջացրին մեր գյուղի սոցիալ-տնտ, կազմի մեջ:

Ազրարային հեղափոխությունը Հայաստանում և մեր քաղաքականությունը գյուղի վերաբերմամբ առհասարակ հիմնականորեն փոխեցին գյուղի սոցիալական գեմքը և նախապայմաններ ստեղծեցին գյուղական տնտեսությունների հետագա շերտավորման նոր ընթացքի համար: Պրոլետարական հեղափոխությունից անմիջապես հետո գյուղացիական հողագործության զգալի լայնացումը (կալվածատիրական, վաճառքապատական և պետական մոտ 200.000 դես. հողերի գյուղացիության ձեռքն անցնելը, հողահավասարեցումը կուլաշյին և ուներ տնտեսությունների հաշվին հոգուտ սակավահող և հողագործկ տնտեսությունների), չքավոր տնտեսություններին ցուց արվող նյութական

և վարկային աջակցությունը, դասակարգային քաղաքանությունը հարկավորման և այլ աշխատանքների ասպարեզներում արգյունք ունեցան գյուղացիական լայն մասսաների տնտեսական գրության համեմատական բարելավումը յեզ գյուղացիության միջին շերտի գգալի ընդլայնումը:

Այս յեղակացությունը հաստատվում և մի շարք տվյալներով, ըստ կ.դ. 10 տոկոսային լնտրովի վեճակագրության արդյունքների, մենք ունենինք Հայաստանում:

	1925 թ.	1926 թ.	1927 թ.
Ցանքագուրկ տնտեսություններ	17,7 ա.	15,9 ա.	13,5 ա.
Մինչեւ 1 դես. ցանք ունեցողներ	36,7 ա.	33,8 ա.	34,5 ա.
1-ից մինչեւ 3 դես. »     »	36,1 ա.	39,1 ա.	39,1 ա.
3-ից մինչեւ 6 ա. »     »	8,1 ա.	9,4 ա.	10,5 ա.
6 և ավելի »     »     »	1,4 ա.	1,8 ա.	2,5 ա.
Տնտեսութ. առանց անսասուններ	—	19,8 ա.	15,2 ա.
Տնտեսութ. առանց լծկանի	55,4 ա.	48,0 ա.	37,5 ա.
Տնտես. առանց գյուղիներների	63,1 ա.	55,8 ա.	46,7 ա.

Վերոհիշյալ տվյալները, չնայած սրանց մոտավոր նշանակության, ցուց են տալիս մեր գյուղի տնտեսական գրության բարելավումը, գյուղական տնտեսությունների միջակացումը:

Այս յերեսություններին զուգնը թագ չի կարելի անտեսել նաև գյուղի կապիտալիստական տարրերի վորոշականությունը՝ միջակների վերաշաշների հաշվին: Այդ մասին են վկայում արենդային հարաբերությունների զարգացումը Հայաստանում և շահագործող տնտեսություն-



6381-56

Ներին բնորոշ անտագոնիստական յերկույթների տարածումը (հողի վարձակալություն, վարձու աշխատանքի կիրառում և այլն):

Ընկերներ, մենք ունենք նաև գիտողկոմատի ավյալները գյուղի սոցիալական կազմի մասին՝ գյուղ- բասմարկի ավյալների համաձայն։ Համեմատելով այս բոլորը, մենք թեև չենք կարող ճշգրիտ թվաբանա- կան պատասխան տալ դրված հարցին, բայց կարող ենք լեզրակացնել վոր մեր գյուղի ներկա սոցիալա- կան դեմքը բնորոշվում ե հետեւյալ կերպով։ միջակ գյուղացիությունը կազմում ե թե քանիակով, թե տըն- տեսական նշանակությամբ մեր գյուղի հիմնական դեմքը և գյուղացիության մեծամասնությունը։ Վոր- պես արդյունք անցյալի սոսկալի ժառանգության, դեռևս զգալի տոկոս ե կազմում գյուղական չքափորու- թյունը, դանդաղ տեմպով դեռևս շարունակվում ե նաև կուլակային հատվածի վորոշ աճումը միջակ գյու- ղացիության վերնաշերտի հաշվին։ Գյուղի սոցիալա- կան դրության այդ ընդհանուր պատկերն անհրաժեշտ ե նկատի ունենալ՝ գյուղատնտեսության հետագա զարգացման ուղիները և մեր անելիքները վորոշելու համար։

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մենք գիտենք, ընկերներ, վեր մանր և մանրա-  
գույն, միջակ և չքավոր գյուղական տնտեսություն-  
ները կազմում են մեզանում հայտյական մեծամաս-  
նություն, և թեև նրանց տնտեսապես ամրացման առ-  
պարիզում մենք ունենք վորոշ հաջողություններ, բայց  
այդ հաջողությունները չափազանց անբավարար են և

կազմելու յեն առաջին նախադրյալները հետագա ավելի բուռն զարգացման։ Անհրաժեշտ ե շարունակել շատ ավելի ուժեղ թափով. քան մինչեւ, այժմ, գյուղատնտեսական վերելքը տեխնիկական և սոցիալական նոր հիմքերի վրա, մեքենայացնել գյուղը, բարձրացնել գյուղատնտեսության բիրքատվությունը և ապրանքայինությունը, հրաժարվել աշխատանքի հետամնաց և քայլությունը, նախադարձել աշխատանքի հետամնաց և նահապետական ձևերից, բարձրացնել գյուղի կուլտուրական մակարդակը։

ի՞նչ ուղիներով պիտի ընթանա սլատմական այս  
խնդիրների իրականացումը: Առաջին ճանապարհը, վոր-  
գոչ մի գեղքում չի կարելի թերափնահատել դա ան-  
հատական չքալոր և միջակ անտեսությունների բեր-  
քատվության բարձրացման, նրանց ամրացման ճա-  
նապարհն ե: Ամեն կերպ աջակցելով անհատական աշ-  
խատավորական տնտեսությունների բարելավման,  
նրանց բերքատվության բարձրացման, ամենալայն  
չտփերով գրավելով նրանց կոռպերացիայի ցանցով,  
մենք աստիճանաբար կկարողանանք կապել այդ տըս-  
տեսությունները զյուղի սոցիալական վերակառուց-  
ման աշխատանքների հեա: Լենինյան կոռպերատիվ  
պլանի հիման վրա՝ միացնելով անհատական տնտե-  
սությունների արտադրական պրոցեսները՝ մենք կկա-  
րողանանք ներգրավել նրանց սոցիալիստական շինա-  
րարության հոսանքով: Այս առաջին ճանապարհին  
զուգընթաց անհրաժեշտ ե ամենամեծ յեռանդով ծա-  
գուղընթաց անհրաժեշտ ե ամենամեծ յեռանդով ծա-

ցիւլական վերակառուցման ամենալայն և արմատական ճանապարհը:

Պոչ մի գեղգում չպիտի թուլատրել այս յերկու ճանապարհների հակադրումը կամ մեկի թերագնահատումը, վոր վոչ այլ ինչ կլինի, յեթե վոչ կուսակցության գծի անհարազատ աշ և «Ճախ» թեքումներին տուրք տալ: Անթույլատրելի սխալ կլինի կարծել, վոր արդեն սպասվել են անհատական տնտեսությունների դարգացման հնարավորությունները: Վերջին գալառալին կուսկոնֆերանսների ժամանակ, յերբ մենք շեշտում ենինք անհատական տնտեսություններին աշխացելու անհրաժեշտությունը, միքանի ընկերներ զարմանքով տում եյին, վոր հիմա, յերբ կուսող շինարարության հարցն ե դրվում, դա ավելորդ աշխատանք է: Մեր կուսակցության քաղաքականության հետ վոչ մի առնչություն չունեցող տեսակետ ե դա, վորի դեմ անհրաժեշտ ե ամեն կերպ պարզաբերել: Միաժամանակ պետք ե պայքարել և այն ընկերների դեմ, վորոնք թերագնահատում են կոլտնտշինս բարության պատմական նշանակությունը: Հատկապես հայաստանում, վորոնեղ, ինչպես մենք շեշտեցինք, մենք գործունենք հետամնաց ու աղքատ գյուղի հետ, վորոնեղ վարկավորումը և հիմնական ներդրումները նպատականաբար ե ողտագործել համայնական հիմքերի վրա, մենք ավելի մեծ հետևողականությամբ պետք ե ընդգծենք կոլտնտշինարարության հսկայական նշանակությունը: Զկա ավելի կարեռը մի խնդիր մեր գյուղիջիների համար, քան կոոպերացիայի ծավալումը և կոլտնտշինարարությունը գյուղում: Զկա ավելի վերենը պարտականություն գյուղացի կոմմունիստի

համար, քան կոլտնտշինարարության գաղափարի մասսայականացումը, նրա հասկանալի և ընդունելի դարձընելը գյուղացիության ամենալայն շերտերի համար:

Մեր գյուղական բջիջները պետք ե աշխապահները և զբոշակակիրները լինեն գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների, կոոպերացիայի ամրացման և ծավալման, կուտուրական հեղափոխության խորացման գյուղում: Ահա, ընկերներ, գյուղական մեր անելիքների հիմնական հարցերը:

Այժմ անցնենք գյուղական աշխատանքների կոնկրետ բնագավառներին:

## 2. ՄԵՐ ՆՎԱՋՈՒՄՆԵՐԸ. ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿՈՂՊԵՐԾՑԻՒՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԵԼԻՍՏԻԿԵՆ ՎԵՐԱԿԵՐՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԵԿԱՆ ԼԺԾԿԻ:

Պետք ե սկսենք, ընկերներ, տնտեսական աշխատանքներից, վորոնց մեջ առաջին տեղը բռնում ե գյուղատնտեսական և սպասողական կոոպերացիան, յերկու հիմնական լծակներ, յերկու հենարաններ, վորոնց ոգտագործելով միայն մենք կկարողանանք իրագործել գյուղի սոցիալիստական վերակառուցման զրժվարին գործը, կկարողանք սոցիալիզմի ձանապարհով առաջ մղել գյուղացիության լայն հատվածները: Գյուղատնտեսական կոոպերացիան, գյուղվարկը, մեքենաների մատակարարումը, ահա աշխատանքների յերեք ասպարեզ, վորոնք վճռական նշանակություն ունեն գյուղի տնտեսական վերակառուցման աշխատանքների համար և պահանջում են մեր կուսակցությունը:

թյան չափազանց լուրջ ուշադրությունը: Կարելի է  
արձանագրել գյուղատնտեսական կոռպերացիայի աշ-  
խատանքներում աչքի ընկնող նվաճումներ, աչքի ընկ-  
նող հաջողություններ, հատկապես վերջին ժամանա-  
կաշըջանում: Գյուղատնտեսական կոռպերացիան այժմ  
ընդգրկում է Հայաստանի բոլոր տնտեսությունների  
40 տոկոսը: Աչքի յե ընկնում կոռպերացիայի ցանցի  
լայնացման արագ տեմպը. միայն սի, վերջին տար-  
վա լնթացքում նա աճել է 10 տոկոսով: Սակայն  
անհրաժեշտ է ել ավելի լայնացնել գյուղատնտեսական  
կոռպերացիայի ցանցը, հատկապես մեր լեռնային շըր-  
ջաններում (Բայազետի, Թարալազյազի, Զանգեզուրի  
գավառում), զորտեղ նա բավարար զարգացման գեռ  
չի հասել:

Ինչ զերաբերում ե կոռպիրացիսյի սոցիալական  
կազմին, ապա այստեղ ևս, իթի զերցնենք ընդհա-  
նուր տվյալները, պետք ե արձանագրենք աչքի ընկ-  
նող հաջողություններ. այն ժամանակ, յերբ 26 թ.  
գուղատնտեսական կոռպիրացիան ընդգրկում եր իր  
ամբողջ ցանցում 29 տոկ. չքավոր տնտեսություններ,  
66 տոկ. միջակ և 5 տոկ. ունկոր տնտեսություններ,  
ապա 28 թ. գուղատնտեսական կոռպիրացիան ընդ-  
գրկում ե 54 տոկ. չքավոր, 51 տոկ. միջակ և 5 տոկ.  
ունկոր տնտեսություններ: Ընկերներ, յես անձաւը  
հեռու լիմ այն մտքից, վոր այս թվերը տալիս են մեզ  
իրականության խսկական պատկերը: Կոռպիրացիակի  
սոցիալական կազմի համեմատական լավացումը լիթի  
անփիճելի յե, ապա պարզ ե նաև այն, վոր մենք գետ  
հեռու լինք չքակորության լրիվ ընդգրկումից: Անբա-  
վարաբ ե նաև միջակ տնտեսությունների կազմակեր-

պումը կոռպերացիայի ցանցում։ Այդ պատճառով ել անհրաժեշտ ե լարել աշխատանքները կոռպերացիայի ցանցի լայնացման համար և դրան զուգընթաց միջոցներ ձեռք առնել ապահովելու համար մոտակա ժամանակաշրջանում կոռպերացիայի սոցիալական կազմի հետագա կարգավորումը։ Այս խնդիրը լուծելու համար հսկայական նշանակություն ունի չքավորության կոռպերացման փոնդի ճիշտ ոգտագործումը։ Մենք գեուս մոտիկ անցյալում արձանագրել ենք այս ասպարիցում խայտառակ յերկությներ, յերբ այդ փոնդերն իրենց նպատակին և ժամանակին չեն ծախսվել այլ ժախավիլ են ուրիշ նպատակով։ Այս տարի դրությունն ավելի լավ ե, բայց և այնպես մենք գեռ հեռու յենք համապատասխան փոնդերի լրիվ ոգտագործումից։ Այսպես, որինակ, վարդկալին ընկերությունների գծով, վերջին 15 ամիսների ընթացքում, առ 1-ն հունվարի, կոռպերացման փոնդերի միայն 76 տոկոսն ե վարի, կոռպերացման փոնդերի միայն 35 տոկոսը, բամբակագործական կոռպերացիան միայն 66 տոկոսը։ Անհրաժեշտ ե մի կողմից ավելի լայնացնել կոռպերացման փոնդերի քանակը և մշակ կողմից միջոցներ ձեռք առնել նրանց ճիշտ ոգտագործելու, խստիվ պատասխանատվության յենթարկելու այլ ասպարիզում մեր կուսակցության գիծը խախտողներին, վրաբեսովի ժամանակին և իր նպատակին ոգտագործվեն այն փոնդերը վորոնք տրամադրվում են չքավորությանը կոռպերացիայի յենթարկելու համար։

Յեթէ վերցնենք վարկավորումը, գյուղատնտեսական վարկի բաժանման և ողտագործման խնդիրը, վորտեղ նույնպես սկզբնական շրջանում կուսակցութեան պահպանը:

թւան գիծը խախտվել և ամենախայտառակ ձեռվ, մենք պետք ե արձանագրենք զդալի բեկումն, Սակայն այստեղ ևս առանձին վարկալին ընկերությունների մեջ գեն գոյություն ունեն դասակարգակին գծի աղավաղման յերեսութներ, յերբ վարկը գընում ե այլ գծով, քան թե նախորոշել և մեր կուսակցությունը: Մեր գուղական բջիջները, բոլոր կուսակցական կազմակերպությունները պետք ե կենարոնացնեն ուշադրությունը վարկագործան քաղաքականության մասին մեր վորոշումները կիրասելու վրա, վարկագուրիկ անելու համար կուլակներին, լայն չափով ոգնելու համար աշխատավորական տնտեսություններին:

Մեքենաների մատակարարման ասպարիզում, ուր չերկու տարի սրանից առաջ առատորեն ոգտվում երին առաջին հերթին ունենոր տարբերը, զրությունը նույնպես լավացել եւ վերջին յերկու կամպանիաների ժամանակ կողմնտեսություններն ստացել են բոլոր մեքենաների՝ 72 տոկոսը, չքափորները՝ 8,5 տոկոսը, միջակները՝ 17,5 տոկոսը և ունենորները՝ 2,2 տոկոսը:

Անկասիած այս թվերին պետք ե մոտենալ վորոշ վերապահումներով, վորովհետեւ մեր բյուրոկրատիկապարատը շատ հաճախ զանագան գունավորումներ և տալիս վիճակարական թվերին: Պետք ե հետագայում ասպարիզում դաշտական պատճեն համար արորը գութանով, ավելի լայն չափով մեքենայացնելու համար մեր գուռվը: Անհրաժեշտ ե նաև ավելի ուշադիր լինել մեքենաների լրիվ ոգտագործման խնդրին: Հնայած ինվենտարի հսկայական պակասությանը, մենք հեռու չենք յեղած ինվենտարի լրիվ ոգտագործումից, և շնորհիվ անփուլթ, շատ անգամ վոճրագործ վերաբերմունքի զեպի նորոգման զործը, մեր ինվենտարը շատ կարճ ժամանակամիջոցում փչանում ե: Տրակտորներից, վոր մենք ստացանք վերջին տարիների ընթացքում, այժմ արդին շարքերից գուրս են յեկել 34 տրակտոր: Սա ցուց ե աալիս, վոր մեր կազմակերպությունները, մեր տեղական որդաններն անփուլթ վերաբերմունք են ցույց տալիս զեպի մեքենաները, զեպի մեր ինվենտարը: Կուսակցական կազմակերպությունները և տեղական խորհրդավորն որ-

ները: Արորը գութանով վոխարինելու խնդիրը, վորպես մոտակա տարիներում լիովին վճռելի մի խնդիր, պիտի և դնել մեր կոռպերացիայի և վարկալին ընկերությունների առաջ: Շատ անգամ մեր խալ շարքերում վարող թերագնահատությամբ են վերաբերվում ինպրին, առում են, վոր հայաստանի պես քարոզ յերկուում արորն ել բավական ե:

Յեթե մենք առուրք տանք այդ որբուզովյան տրամադրություններին, իհարկե, վոչ թէ մոտակա 5-ամյակում, այլև միքանի 5-ամյակների ընթացքում մեր գյուղը նույն քամուգոնյան զրության մեջ կմնա: Անհրաժեշտ ե, վորպեսզի մեր բոլոր կազմակերպությունները, հատկապես զյուղատնտեսական կոռպերացիան և Հողգողկոմատն անմիջապես սկսեն գործնական միջոցներ մշակել՝ այս 5-ամյակում ամբողջապես վոխարինելու համար արորը գութանով, ավելի լայն չափով մեքենայացնելու համար մեր գուռվը: Անհրաժեշտ ե նաև ավելի ուշադիր լինել մեքենաների լրիվ ոգտագործման խնդրին: Հնայած ինվենտարի հսկայական պակասությանը, մենք հեռու չենք յեղած ինվենտարի լրիվ ոգտագործումից, և շնորհիվ անփուլթ, շատ անգամ վոճրագործ վերաբերմունքի զեպի նորոգման զործը, մեր ինվենտարը շատ կարճ ժամանակամիջոցում փչանում ե: Տրակտորներից, վոր մենք ստացանք վերջին տարիների ընթացքում, այժմ արդին շարքերից գուրս են յեկել 34 տրակտոր: Սա ցուց ե աալիս, վոր մեր կազմակերպությունները, մեր տեղական որդաններն անփուլթ վերաբերմունք են ցույց տալիս զեպի մեքենաները, զեպի մեր ինվենտարը: Կուսակցական կազմակերպությունները և տեղական խորհրդավորն որդավորն որ-

գաններն այդ աշխատանքը նույնպես իրենց ուշադը բռնթյան առարկա պէտի դարձնեն, վրապեսզի ապահովեն չեղած ինվինտարի լլիվ և նպատակահարմար ողագործումը:

Գյուղատնտեսական կոռագերացիալի հետեւյալ գըլ-  
խավոր խնդիրը, վորը նույնպես սուր կերպով պետք  
է դնել ամբողջ կազմակերպության առաջ, կոռագերա-  
ցիայի մասնագիտացումն և և նրա շերտավորումը:  
Պետք է ասել, վոր ընդհանուր առմամբ մեր կոռագե-  
րացիան առայժմ ընդգրկում է անհատական տնտեսու-  
թյունների սպառողական և մատակարարման կարիք-  
ները միայն, իութանակ գյուղատնտեսության արտա-  
դրական պրոցեսների աստիճանական կոռագերացումն  
իրագործելու:

Կոնտրակտացիան, վորն աչքի ընկնող զենք և մեր  
ձեռքում՝ ազգելու համար նրա միջոցով գլուղատնտես-  
սական առանձին տնտեսությունների արտադրական  
պրոցեսների վրա, մեզանում, պետք և խոստվաճել,  
հարկ յեղած դարձացման գեռ չի հասել: Յեթե բամբա-  
կագործության ասպարիզում մենք ունենք կոնտրակ-  
տացիայի լայն ծավալումը, ապա նույնը չի կարելի  
ասել այլ և այլ ճյուղերի մասին: Անհրաժեշտ և, վոր-  
պեսզի գյուղատնտեսական կոռպերացիան և մեր պե-  
տական մթերող որգաններն առաջիկա սեղոնին կոն-  
տրակտացիան ավելի լայն հիմունքների վրա դնեն,  
ընդունակելով նրա միջոցով գլուղատնտեսության բոլոր  
գլխավոր ճյուղերը:

Հետեւալ հարցը մասսայական աշխատանքների խնդիրն է, վորը շատ թույլ է ինդել մինչև այժմ։ Մեր կոռպերացիան տարվում է զուտ առեւրական ձեռ-

նարկնելով, և մոռացվում է, վոր հարկավոր ե մաս-  
ստյական աշխատանքները ևս լայն հիմքերի վրա դը-  
